«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/06.3»

ք. Կապան «17» հունվար 2023 թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ասատուր Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 23456194 (քսաներեք միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո

ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ
ք. Կապան, Մ.Ստեփանյան 13
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրենի պաշտոնակատար Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
ք.Երևան,Օհանով փ.15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« » հունվար 2023 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/06.3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33642230/514	Էութիրոքս դ/հ 25մկգ №100	Մերկ ԿԳԱԱ	լևոթիրոքսին (լևոթիրոքսին նատրիում), դեղահատեր, 25 մկգ	հատ	7.14	37128	**5200**	**Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝** ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի	Ապրանքը կմատակարարվի 2023թ-ին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2023թ
2	33642230/515	Էութիրոքս դ/հ 50մկգ №100	Մերկ ԿԳԱԱ, Ֆրանկֆուրտեր Շտրասե 250, 64 293 Դարմշտադտ	լևոթիրոքսին (լևոթիրոքսին նատրիում), դեղահատեր, 50 մկգ	հատ	8.59	78169	**9100**			
3	33642230/516	Էութիրոքս դ/հ 75մկգ №100	Մերկ ԿԳԱԱ, Ֆրանկֆուրտեր Շտրասե 250, 64 293 Դարմշտադտ	լևոթիրոքսին (լևոթիրոքսին նատրիում), դեղահատեր, 75 մկգ	հատ	9.08	47216	**5200**			
6	33661156/502	Թիմոլոլ ակնակաթիլներ 0,5%5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ	թիմոլոլ (թիմոլոլի մալեատ), ակնակաթիլներ, 5մգ/մլ; 5մլ պլաստիկե սրվակ -կաթոցիկ	հատ	330	128700	**390**			
12	33621600/502	Ինդապաֆոն դ/հ 2,5մգ №30	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան "ԲԲԸ	ինդապամիդ 2.5 մգ դեղահատեր թաղանթապատ	հատ	13	19500	**1500**			
15	33691213/502	Լակտո-Ջի դ/պ №10	ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (լակտոբացիլուս ացիդոֆիլուս, բիֆիդոբակտերիում լոնգում, բիֆիդոբակտերիում բիֆիդում, բիֆիդոբակտերիում	հատ	170	170000	**1000**			

				ինֆանտիս),դեղապատիճներ,10 x10^9 ԳԳՄ/գ;							
18	33691600/502	Լևիցիտամ թ/պ դ/հ 500մգ №60 Լ	Ֆարմա ստարտ	լևետիրացետամ 500 մգ; դեղահատեր թաղանթապատ	հատ	99	926640	**9360**			
19	33661133/504	Լևոկոմ դ/հ 250մգ+25մգ №10	ֆարմա ստարտ	լևոդոպա, կարբիդոպա,դեղահատեր,250մգ+25մգ;	հատ	59	767000	**13000**			
20	33651254/502	Ֆեմարա դ/հ 2,5մգ №30	Նովարտիս Ֆարմա Շտեյն ԱԳ, Շաֆհաուզերշտրասե, 4332 Շտեյն	լետրոզոլ,դեղահատեր թաղանթապատ,2,5 մգ	հատ	570	4446000	**7800**			
22	33661116/502	Լիդոկայինի հիդրոքլորիդ ցողացիր 10% 38գ	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	լիդոկային,ցողացիր արտաքին կիրառման,4.6մգ/դեղաչափ; 38գ ապակե սրվակ դեղաչափիչ մխոցով	հատ	2790	139500	**50**			
27	33671131/503	Լորատադին դ/հ 10մգ №10	“Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան” ԲԲԸ	լորատադին 10մգ; դեղահատեր	հատ	20.9	225720	**10800**			
30	33691186/504	Լուցետամ թ/պ դ/հ 800մգ №30	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	պիրացետամ,դեղահատեր թաղանթապատ,800մգ;	հատ	49	286650	**5850**			
33	33691231/502	Կալցիում D3 ծամելու դ/հ 500մգ/200ՄՄ №100	Տակեդա ԱՍ	կալցիում (կալցիում կարբոնատ), քոլեկալցիֆերոլ,դեղահատեր ծամելու նարնջի համով,500մգ+5մկգ(200ՄՄ);	հատ	36	180000	**5000**			
37	33621510/503	Կապտոպրիլ դ/հ 25մգ №40	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան "ԲԲԸ	կապտոպրիլ 25մգ; դեղահատեր	հատ	3.4	20400	**6000**			
38	33691201/502	Կատվախոտի ոգեթուրմ 30մլ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Կատվախոտի ոգեթուրմ 200մգ/մլ; ապակե սրվակ 30մլ	հատ	128	64000	**500**			
39	33691224/502	Վազոնատ սրվ. 100 մգ/մլ 5մլ №10	Օլայնֆարմա	մելդոնիում, լուծույթ ներարկման,100մգ/մլ; ամպուլներ 5մլ	հատ	209.5	209500	**1000**			
43	33661185/502	Կետորոլակ ամպ. 3% 1մլ №10	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան "ԲԲԸ	Կետորոլակ 30մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ մ/մ ներարկման	հատ	75	150000	**2000**			
44	33661180/	Կլոնազեպամ դ/հ	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք.	կլոնազեպամ 2 մգ դեղահատեր	հատ	35.7	27846	**780**			

	502	2մգ №24	Աբովյան, 2-րդ միկրոշ								
45	33621764/508	Կո-Ամլեսսա դ/հ 4մգ/5մգ/1,25մգ №30	ԿՌԿԱ դ.դ.	պերինդոպրիլ (պերինդոպրիլի տերտ-բուտիլամին), ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ), ինդապամիդ 4մգ+5մգ+1,25մգ; դեղահատեր	հատ	79	687300	**8700**			
46	33621764/509	Կո-Ամլեսսա դ/հ 8մգ/10մգ/2,5մգ №30	ԿՌԿԱ դ.դ.,	պերինդոպրիլ (պերինդոպրիլի տերտ-բուտիլամին), ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ), ինդապամիդ 8մգ+10մգ+2,5մգ; դեղահատեր	հատ	87	809100	**9300**			
50	33611150/504	Կրեոն-10 000 դ/պ №20	Աբբոտտ Լաբորատորիես ԳմբՀ, Յուստուս-վոն-Լիեբիգ-Շտրասե 33, 31535 Նեուշտադտ	պանկրեատին (լիպազ 10000ԵՖՄ, ամիլազ 8000 ԵՖՄ, պրոտեազ 600 ԵՖՄ) 150մգ դեղապատիճներ աղելույծ	հատ	94.55	941718	**9960**			
51	33611150/505	Կրեոն-25 000 դ/պ №20	Աբբոտտ Լաբորատորիես ԳմբՀ, Յուստուս-վոն-Լիեբիգ-Շտրասե 33, 31535 Նեուշտադտ	պանկրեատին (լիպազ 25000ԵՖՄ, ամիլազ 18000 ԵՖՄ, պրոտեազ 1000 ԵՖՄ),դեղապատիճներ աղելույծ,300մգ	հատ	210	945000	**4500**			
52	33691199/502	Կարսիլ թ/պ դ/հ 22,5մգ №80	Սոֆարմա ԲԸ, փ. Իլիենսկո շոսե 16, 1220 Սոֆիա	սիլիմարին 22,5մգ թաղանթապատ դեղահատեր	հատ	21	20160	**960**			
53	33651125/501	Հեմոմիցին դ/կախույթ 200մգ/5մլ 20մլ	Հեմոֆարմ Ա.Դ., 26300 Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ	ազիթրոմիցին (ազիթրոմիցինի դիհիդրատ) 200մգ/5մլ; դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի	հատ	1200	432000	**360**			
56	33621100/501	Հեպարին-Ինդար սրվ. 5 000ԱՄ/մլ 5մլ №1	ԱԲԸ'Ինդար'	հեպարին (հեպարին նատրիում), լուծույթ ն/ե և ե/մ ներարկման,5000ՄՄ/մլ; ապակե սրվակ 5մլ	հատ	1400	3500000	**2500**			
62	33611150/506	Մեզիմ Ֆորտե դրաժե 3 500ՄՄ №20	Բեռլին-Քեմի ԱԳ,	պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ),դեղահատեր թաղանթապատ,3500ԱՄ+4200 ԱՄ+250ԱՄ	հատ	30.8	61600	**2000**			
63	33631200/502	Մեկոլ-Բորիմեդ քսուք 40գ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ,քսուք արտաքին կիրառման,7.5մգ/գ+40մգ/գ; 40գ	հատ	220	66000	**300**			

				ալյումինե պարկուճ							
64	33611160/502	Մետոկլոպրամիդ ամպ. 5մգ/մլ 2մլ №10	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան "ԲԲԸ	մետոկլոպրամիդ (մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ), լուծույթ ներարկման, 5 մգ/մլ; ամպուլներ 2 մլ	հատ	43.4	217000	**5000**			
67	33691216/502	Մեքսիպրիմ ամպ. 50մգ/մլ 2մլ №10	Գիտատեխնոլոգիական Դեղագործական Ընկերություն ՊՈԼԻՍԱՆ ՍՊԸ	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ, լուծույթ ն/ե և մ/մ ներարկման,50մգ/մլ; ամպուլներ 2 մլ,	հատ	136	544000	**4000**			
68	33691216/505	Մեքսիպրիմ ամպ. 50մգ/մլ 5մլ №5	Գիտատեխնոլոգիական Դեղագործական Ընկերություն ՊՈԼԻՍԱՆ ՍՊԸ	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ, լուծույթ մ/մ և ն/ե ներարկման,50մգ/մլ; ամպուլներ 5 մլ	հատ	365	1825000	**5000**			
69	33661135/502	Միդազոլամ Կալցեկս ամպ. 5մգ/մլ 3մլ №10	Կալցեկս ԲԲԸ	միդազոլամ 5մգ/մլ; ամպուլներ 3մլ, լուծույթ ներարկման/կաթիլաներարկման	հատ	580	87000	**150**			
71	33641210/502	Միրոպրիստոն դ/հ 200մգ №3	Օբնինսկի Քիմիադեղագործա-կան Ընկերություն» ՓԲԸ	միֆեպրիստոն, դեղահատեր, 200մգ	հատ	4933.33	4439997	**900**			
75	33651139/503	Մակսիֆլոքս ակնակաթիլներ 5մգ/մլ 5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ	մոքսիֆլոքսացին (մոքսիֆլոքսացինի հիդրոքլորիդ), ակնակաթիլներ,5մգ/մլ; 5մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ	հատ	1545	77250	**50**			
86	33621360/506	Նիտրոմինտ ցողացիր 10գ	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	նիտրոգլիցերին,ցողաշիթ ենթալեզվային դեղաչափավորված,0,4մգ/դեղաչափ; 10գ ալյումինե տարա (180 դեղաչափ)	հատ	1190	59500	**50**			
90	33621530/507	Նոլիպրել Արգինին Ֆորտե դ/հ №30	Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիդի	պերինդոպրիլ արգինին, ինդապամիդ 5մգ+1,25մգ; դեղահատեր թաղանթապատ	հատ	87	678600	**7800**			

95	33621540/503	Պապավերին ամպ. 2% 2մլ №10 Պ	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան "ԲԲԸ	պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ),լուծույթ ներարկման, 20մգ/մլ; ամպուլներ 2մլ	հատ	27	81000	**3000**			
96	33621540/504	Պապավերին մոմիկ 0,02գ №10 Պ	Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7	պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ),մոմիկներ ուղիղաղիքային,20մգ	հատ	60	60000	**1000**			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

*Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:

*Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

*Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի նաև առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն:

*Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

* Որակի սերտիֆիկատների առկայություն

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ
ք. Կապան, Մ.Ստեփանյան 13
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրենի պաշտոնակատար Ա.Մնատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
ք.Երևան,Օհանով փ.15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » հունվար 2023 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/06.3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33642230/514	Էութիրոքս դ/հ 25մկգ №100													
2	33642230/515	Էութիրոքս դ/հ 50մկգ №100													
3	33642230/516	Էութիրոքս դ/հ 75մկգ №100													
6	33661156/502	Թիմոլոլ ակնակաթիլներ 0,5%5մլ													
12	33621600/502	Ինդապաֆոն դ/հ 2,5մգ №30													
15	33691213/502	Լակտո-Ջի դ/պ №10													
18	33691600/502	Լևիցիտամ թ/պ դ/հ 500մգ №60 Լ													
19	33661133/504	Լևոկոմ դ/հ 250մգ+25մգ №10													
20	33651254/502	Ֆեմարա դ/հ 2,5մգ №30													
22	33661116/502	Լիդոկայինի հիդրոքլորիդ ցողացիր 10% 38գ													
27	33671131/503	Լորատադին դ/հ 10մգ №10													
30	33691186/504	Լուցետամ թ/պ դ/հ 800մգ №30													
33	33691231/502	Կալցիում D3 ծամելու դ/հ 500մգ/200ՄՄ №100													
37	33621510/503	Կապտոպրիլ դ/հ 25մգ №40													
38	33691201/502	Կատվախոտի ոգեթուրմ 30մլ													
39	33691224/502	Վազոնատ սրվ. 100 մգ/մլ 5մլ №10													
43	33661185/502	Կետորոլակ ամպ. 3% 1մլ №10													
44	33661180/502	Կլոնազեպամ դ/հ 2մգ №24													
45	33621764/508	Կո-Ամլեսսա դ/հ 4մգ/5մգ/1,25մգ №30													

46	33621764/509	Կո-Ամլեսսա դ/հ 8մգ/10մգ/2,5մգ №30														
50	33611150/504	Կրեոն-10 000 դ/պ №20														
51	33611150/505	Կրեոն-25 000 դ/պ №20														
52	33691199/502	Կարսիլ թ/պ դ/հ 22,5մգ №80														
53	33651125/501	Հեմոմիցին դ/կախույթ 200մգ/5մլ 20մլ														
56	* 33621100/501	Հեպարին-Ինդար սրվ. 5 000ԱՄ/մլ 5մլ №1														
62	33611150/506	Մեգիմ Ֆորտե դրաժե 3 500ՄՄ №20														
63	33631200/502	Մեկոլ-Բորիմեդ քսուք 40գ														
64	33611160/502	Մետոկլոպրամիդ ամպ. 5մգ/մլ 2մլ №10														
67	33691216/502	Մեքսիպրիմ ամպ. 50մգ/մլ 2մլ №10														
68	33691216/505	Մեքսիպրիմ ամպ. 50մգ/մլ 5մլ №5														
69	33661135/502	Միդազոլամ Կալցեկս ամպ. 5մգ/մլ 3մլ №10														
71	33641210/502	Միրոպրիստոն դ/հ 200մգ №3														
75	33651139/503	Մակսիֆլոքս ակնակաթիլներ 5մգ/մլ 5մլ														
86	33621360/506	Նիտրոմինտ ցողացիր 10գ														
90	33621530/507	Նոլիպրել Արգինին Ֆորտե դ/հ №30														
95	33621540/503	Պապավերին ամպ. 2% 2մլ №10 Պ														
96	33621540/504	Պապավերին մոմիկ 0,02գ №10 Պ														

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ
ք. Կապան, Մ.Մտեփանյան 13
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրենի պաշտոնակատար Ա.Մաստոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
ք.Երևան,Օհանով փ.15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ա.Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ